

համագործակցության առաջարկ հոգեբույժի համար

○ փորձագիտական աշխատանքի նկարագիրը

մշակել պրակտիկ հուշումներ սոցիալական աշխատողների համար՝

- ճգնաժամային ու հետճգնաժամային իրավիճակներում հոգեբույժի հետ համագործակցելու եւ ուղղորդումներ իրականացնելու վերաբերյալ
- ճգնաժամային եւ հետճգնաժամային իրավիճակներում կնոջ* եւ քվիր մարդու հոգեկան առողջության առավել տարածված դրսեւորումների, նշանների վերաբերյալ, որոնց դեպքում սոցիալական աշխատողը պետք է անձին ուղղորդի հոգեբույժի մոտ
- միջմասնագիտական սահմանների կարեւորության մասին. ինչպե՞ս համագործակցել եւ փոխադարձ հարգել միմյանց մասնագիտական տիրույթը՝ անդրադարձ կատարելով սոցիալական աշխատող-հոգեբույժ եւ սոցիալական աշխատող-հոգեբան-հոգեբույժ փոխհարաբերություններին

○ աշխատանքի տեխնիկական նկարագիրը

- լեզուն՝ հայերեն
- տառատեսակը՝ Arial 12
- ծավալը՝ 3-5 էջ (A5 ձեւաչափով)
- առաջնային տարբերակի մշակման վերջնաժամկետը՝ 2024 թվականի հոկտեմբերի 1

○ համագործակցության համար անհրաժեշտ պայմանները

- ☑ հոգեբուժության եւ | կամ հոգեբուժության կլինիկական օրդինատուրայի կրթություն
- ☑ գիտական եւ | կամ պրակտիկ փորձառություն
- ☑ հոգեկան առողջությանն առնչվող հասկացությունները մարդու իրավունքների մոդելից բխող մոտեցմամբ կիրառելու պատրաստակամություն
- ☑ մարդու արժանապատվության, հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանք
- ☑ գենդերազգայուն մոտեցում
- ☑ խտրականության, սեքսիզմի, հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի հանդեպ անհանդուրժող վերաբերմունք

○ դիմելու կարգը

հետաքրքրված փորձագետները մինչ 2024 թվականի սեպտեմբերի 12-ը կարող են նամակ ուղարկել info@changengo.org էլփոստին՝ նամակի թեմայի տողում նշելով **հոգեբույժ**։

Նամակին կից անհրաժեշտ է ներկայացնել՝

- ⇒ հակիրճ տեղեկատվություն՝ դիմելու հետաքրքրության մասին
- ⇒ ինքնակենսագրականը
- ⇒ ըստ առկայության՝ հեղինակած եւ | կամ համահեղինակած թեմային վերաբերող հոդվածի, ուսումնասիրության, վերլուծության ակտիվ հղումը եւ | կամ էլեկտրոնային տարբերակը
- ⇒ գնային առաջարկ ՀՀ դրամով (ներառյալ՝ հարկերը)

դիմելիս՝ հնարավոր հարմարեցումների կարիքի պարագայում խնդրում ենք կապ հաստատել մեր թիմի հետ՝ change-armenia@protonmail.com էլփոստով։

○ որոշումների կայացման գործընթացը

մեր թիմն ամփոփելու է դիմումները մինչ 2024 թվականի սեպտեմբերի 13-ը եւ հետադարձ նամակով կապ է հաստատելու փորձագետների հետ 2024 թվականի սեպտեմբերի 16-ին։

ընտրությունը կատարվելու է փորձագետի ներկայացրած տվյալների եւ գնային առաջարկի հիմքով՝ համադրելով ներկայացրած տվյալները համագործակցության համար անհրաժեշտ պայմանների հետ։

○ կազմակերպության մասին

«Փոփոխություն» սոցիալ-առողջապահական հասարակական կազմակերպությունը կնոջ* եւ քվիր մարդու առողջության իրավունքի (շահա)պաշտպանությամբ զբաղվող հարթակ է։

մեր նպատակն է փոխել Հայաստանում սոցիալ-առողջապահական համակարգը՝ մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականությունների ու ծառայությունների զարգացման միջոցով։